

Աստուածախմաստ վարդապետն՝ զվերադարձումն քօ ի ճշմարիտ եւ յուղղափառ եւ ի միաբնադաւան հաւատս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց» (էջ 336):

Կարապետ իրրեւ Առաջնորդ Թիֆլիզի եւ միանգամայն իրրեւ Կուիրակ Էջմիածնի կը յիշուի 1782 Մայիս 20 (էջ 376.—377, 384), Յունիս 16 (էջ 393), Յունիս 20 (էջ 395—397, 400) 1783ին սկիզբները (էջ 499):

Աղանեանցի հրատարակած՝ Ղուկաս Կաթողիկոսին Թղթերը 1783էն մինչեւ 1791 կ'ընդհատին ամբողջովին, եւ կը շարունակուին 1791էն: 1792ի սկիզբը արդէն կը գտնենք՝ որ Կաթողիկոսը Թիֆլիզի Առաջնորդ կը կարգէ վերստին Մարտիրոս Ա.ը, փոխանակ Պետրոս Ա.ի՝ որ կը հրաժարէր: Յայտնի է ուրեմն՝ որ մեր Կարապետ Արքեպ.ը 1783էն ետեւ եւ 1792էն շատ յառաջ ելած էր արդէն Թիֆլիզի առաջնորդութենէն: Գժբախտաբար Աղանեանց Գ. քհ. ոչ միայն ունեցած չէ այս տարիներու Թղթերը ձեռքի տակ, այլ եւ ծախքի ինայութեան համար ստիպուած է շատ Թղթերու միայն վերնագիրը դնելով շատանալ, որով այս ամենագովելի եւ ամենայն քաջալերութեան արժանի «Դիւանը» այստեղ կը լքանէ զմեզ:

Բարեբախտաբար մեր Կարապետ Արքեպ. ուրիշ կողմանէ դարձեալ կը ծանօթանայ մեզի: Ինչպէս Կենսագրութեանս սկիզբը ակնարկեցի, Կարապետ Արքեպ. Թիֆլիզի, 1786ին